

ՀԱՅՈՑ ՎԵՐՋԻՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ¹

ԱՐՄԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ

a_shaginyan@mail.ru

Հայոց բազմադարեան պատմութեան ողջ ընթացքում առաջին կայսրութիւնը ձեւաւորեց Տիգրան Բ. Մեծը (95-55 Ք.ա.), նուաճելով Առաջաւոր Ասիայի երկրների մեծ մասը: Հայոց յաջորդ արքաները ընդհուպ մինչեւ Մեծ Հայքի բաժանումը 387ին, հիմնականում պայքար էին մղում պահպանելու պետութեան տարածքային ամբողջականութիւնը: Դրանից յետոյ հայութիւնը բոլորովին զրկուեց սեփական պետականութիւնից: Իրավիճակը կտրուկ փոխուեւ է Ը. դարի սկզբին՝ Հայաստանում եւ յարակից Հարաւային Կովկասում արաբական գերիշխանութեան հաստատումից յետոյ:

Ընդարձակ Արաբական իշխիճայութեան կազմում Հայքը եւ Հարաւային Կովկասի քրիստոնեայ երկրներ Աղուանքն ու Քարթլին միաւորուած էին Արմինիյա միացեալ նահանգի շրջանակներում՝ Դուին, ապա Բարդա կենտրոնով: Արաբները նահանգը կոչեցին տարածքով ու բնակչութեամբ ամենամեծ երկրի (միաւորի)՝ Հայքի (արաբ. Արմինիյա) անուամբ: Արմինիյա նահանգը 271.032 քառ. կլմ. ընդհանուր մակերեսով, բաղկացած էր Արմինիյա Ա.ից (Հայք՝ 144.603 քառ. կլմ. մակերեսով եւ Դուին կենտրոնով), Արմինիյա Բ.ից (Աղուանք՝ 87.441 քառ. կլմ. մակերեսով եւ Բարդա կենտրոնով) եւ Արմինիյա Գ.ից (Քարթլի՝ 38.988 քառ. կլմ. մակերեսով եւ Թբիլիսի կենտրոնով): Այն կառավարուեւ էր արաբ խալիֆաների, կամ նրանց փոխարքաների կողմից նշանակուող կառավարչի կողմից: Նահանգը հանդիսանում էր հարկ վճարող միացեալ սուբեկա²: Մեր մօտաւոր գնահատումներով՝ Ը.-Թ. դարի սահմանագլխին Արմինիյայի բնակչութիւնը կարող էր կազմել մօտ 1,500,000 մարդ, իսկ Արմինիյա Ա.ինը, այսինքն Հայքինը՝ մօտ 750,000³:

Միեւնոյն ժամանակ արաբական գերիշխանութեան պայմաններում Հայաստանին յաջողուեց պահպանել իր ներքին ինքնավարութիւնը: Երկրի խոշոր նախարար-իշխանները կարողացան նոր իշխանութիւններից ստանալ յատուկ պահպանագրեր (արաբ. աման), որոնք իրաւականօրէն ամրապնդեցին նրանց բազմադարեան ժառանգական իրաւունքներն ու արտօնութիւնները, իսկ ամենա գլխաւորը՝ նրանք կարողացան նոր պայմաններում պահպանել «Հայոց իշխան» ազգային ինստիտուտը: Աւելին՝ Թ. դարի առաջին կէսին այդ ինքնավար իրաւունքները թոյլ տուեցին Արմինիյայի վարչական սահմանների ներքոյ ձեւաւորել միանգամայն ինքնուրոյն քաղաքական միաւոր՝ հայ Բագրատունիների իշխանութիւն՝ Բագարատ Բագրատունի (826-851) գահերէց իշխանի գլխաւորութեամբ «իշխանաց իշխան», կամ էլ «մեծ իշխան» տիտղոսով: Վերջինիս սիւզերէնի գերագոյն իրաւունքները տարածուեւ էին Արմինիյայի մնացած իշխանութիւնների վրայ, որտեղ իշխում էին այլ հայկական նախարար-

րական տոհմեր՝ Բագրատունիները (կողային ճիւղ) Տարօնում եւ Մոկսում, Արծրունիները՝ Վասպուրականում եւ Միւնիները՝ Միսականում⁴։

Արաբական իսլամիզացիայից ազատեցող զարաշրջանում Ալ-Մուսթաֆան խալիֆայի (862-866) օրօք հայոց այդ մեծ իշխանութիւնը Բագրատի զարմիկ՝ Աշոտ Ե. Բագրատունու (856-886) գլխավորութեամբ ընդլայնում է իր ինքնիշխանութիւնը վարչա-քաղաքական եւ ֆինանսա-հարկային ոլորտում։ Արմինիայի արաբ կառավարիչ՝ Ալի Իբն Եաֆա Ալ-Արմանին (862-863), ինչպէս գրում է հայոց կաթողիկոս Յովհաննէս Ե. Դրասխանակերտցին (898-929) «...ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զմա [Աշոտ] կացուցանէր, բազում զգեստիւք եւ արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի մա հաւատալով զսակս Հայոց եւ զամենայն բեկար արքունի։ Եւ այսպէս պատուականագոյն եւ առաջին մա գտեալ եղեւ քան զամենայն մախարարութիւնս Հայոց. եւ ամենեքեան դաշինս ընդ մմա դմէին՝ որպէս արդարեւ ընդ քաղաքական զարմի»⁵։

Միւննոյն ժամանակ, Թ. դարի երկրորդ կէսի պատմիչ Թովմա Արծրունու վկայութեամբ՝ «...քանզի հաւատացեալ էր վերականգնութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ մտածել զիշխանս [ոչ միայն] Հայոց, [այլեւ] զՎրաց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ»⁶։ Բանն այն է, որ Թ. դարի առաջին կէսին Արմինիայի հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան շրջաններում նոյնպէս ձեւաւորուել էին ինքնավար իշխանութիւններ, որտեղ տիրում էին հայ Բագրատունիներին ազգակից վրաց եւ աղուանից Բագրատունիները։

Հայոց իշխանութեան հզօրացումը եւ ինքնիշխանացումը Թ. դարի երկրորդ կէսին կարելի է համարել օրինաչափ երեւոյթ։ Արաբական իսլամիզացիայից ազատեցող զարաշրջանում (Եգիպտոս, Իրան, Միջին Ասիա եւն.) Թ. դարի առաջին կէսից գոյութիւն ունեցող ամիրայութիւններից բացի ամէնուրեք յայտնւում են փոխարքաների նոր մահմեդական (արաբական ու իրանական) տոհմեր, որոնք ձգտում էին լիակատար անկախութեան՝ Բաղդադից։ Աւելին՝ պետական ինքնիշխանութիւն ձեռք բերեցին Արմինիայի մերձկասպեան շրջանների ամիրայութիւնները՝ Շիրվանը՝ Շամախի կենտրոնով (մօտ 862ին) եւ Բաբ Ալ-Աբուաբը (Դերբենդը) համանուն կենտրոնով (869ին)։

Այդ պայմաններում Ալ-Մուսթաֆայի խալիֆան (870-892) կառավարիչ է ուղարկում Արմինիա իսա Իբն Ալ-Շալիս Ալ-Շալաբանին (870/1-877)։ Չաքարիա Ա. Չազեցի կաթողիկոսի (855-876) մահից եւ Գէորգ Բ. Գառնեցու (877-897) ընտրութիւնից յետոյ նրա իշխանութեան դէմ - ինչպէս վկայում է Արծրունին - ըմբոստացաւ իր իսկ կողմից նշանակուած Պարտաւի (Բարդայի) քաղաքապետ (ամիր) Եամանիկը (Ալ-Եամանին)⁸։

Ժ. դարակէսի պատմիչ Մովսէս Դասխուրանցու երկասիրութեան՝ Պատմութիւն Աղուանից Աշխարհի Գ. հատորում, Եիսան ('Իսան) կուում է Մահմէտի որդու հետ, «որ կոչէր Էմէիկ» (Մուհամմադ Իբն Աբի Ալ-Վահդիի), 13 տարի, իսկ կառավարչին անվանում էին հայկական զօրքերն Աշոտ Բագրատունու գլխավորութեամբ⁹։ Դա է պատճառը, որ խռովարարը, ինչպէս հաւաստիացնում է Արծրունին, իր գէնքը ուղղեց նաեւ հայոց իշխանաց իշխանի դէմ։ Աշոտին մնում էր դիմել արաբ խալիֆային՝ խնդրելով որ Արմինիայի որպէս կառավարիչ ուղարկի Ահմադին՝ Հալթի որդուն (Ահմադ Իբն իսլաիդին)։ Վեր-

ջինս ժամանեց Դատուան աւան (Վանայ լճի արեւմտեան ափին), սակայն նա նոյնպէս որոշեց Աշոտի իշխանութեան վերջ դնել: Դատուանից Ահմադը Եամանիկին հրովարտակ է ուղարկում հետեւեալ կարգադրութեամբ. «Ի մտանելն իմ ի Դուին քաղաք եւ զհարկս արքունի յիս գրաւել՝ եւ յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ եւ եկեցեմ առ իս. դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա եւ ել ընդդէմ իմ ի պատերազմ, եւ ի միասին մխեցից զձեռս ի սոսա եւ բարձից զսոսա ի պետութեմէ հայոց»: Աշոտը կռահեց Ահմադի նենդ մտադրութեան մասին՝ բռնելով սուրհանդակին գաղտնի գրութեամբ:

Ահմադը իր հերթին մեկնեց Դուին, ինչպէս որ նա մտադրուել էր: Այստեղ նրա մօտ ժամանեցին Աշոտն ու նրա եղբայր Աբաս սպարապետը: Իշխանաց իշխանը սկզբից փորձեց դիւանագիտական ճանապարհով համաձայնութեան գալ Արմինիայի նորանշանակ հազարապետի (կառավարչի) հետ՝ մատուցելով նրան բազում պարգեւներ, ինչպէս որ հարկն էր: Ապա, չըջապատելով բանակատեղին, սպարապետը մատուցեց Ահմադին իր իսկ ձեռքով գրուած ու Եամանիկին ուղարկած դաւադրութեան գրութիւնը: Աշոտի հրամանով՝ Ահմադը ձերբակալուեց եւ դուրս վճռուեց Արմինիայից եւ երկրում իրավիճակին լիակատար տէր դարձաւ Աշոտը՝ հաստատում է Արծրունին¹⁰:

Դրանից յետոյ Եամանիկը փորձում է միմեանց դէմ հանել հայ եւ տեղի արաբ ազնուականներին՝ Աշոտ Բագրատունուն, նրա փեսայ՝ Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկ Արծրունուն եւ Ապահունիքի (Տուրուբերան աշխարհում) բռնաւոր (ամիր) Ապրառ Կայսիկին (Աբու Ալ-Վարդ Աս-Սուլամիին)¹¹: Այս նոյն ժամանակ Գրիգոր-Դերենիկը ինքնակամ պաշտօնազրկում է (հարեւան) Տարօնի իշխան՝ մէկ այլ Աշոտ Բագրատունու (859-878), եւ նրա փոխարէն նշանակում է վերջինիս եղբօրը՝ իր իսկ փեսային՝ Դաւթին (878-895)¹²:

Այս պայմաններում հայոց իշխանաց իշխան Աշոտ Ե. Բագրատունին վճռական քայլեր ձեռնարկեց՝ ամրապնդելու իր գերագոյն իշխանութիւնը Արմինիայում եւ անջատողական միտումներին վերջ դնելու: Նրա զօրքերը պաշարեցին Ապրառին իր իսկ նստավայր Մանազկերտում: Ամիրը ստիպուած էր յանձնուել եւ ճանաչել Աշոտի սիւզերէնութիւնը: Փոխարէնը իշխանաց իշխանից նա ստացաւ «ծրովարտակս ի խաղաղութեան» («պահպանագիր»): Դրանից յետոյ Աշոտը հասաւ Վասպուրական՝ կարգ ու կանոն հաստատելու այս խոշորագոյն աշխարհում: Գրիգոր-Դերենիկին մնում էր փախչել Պարսկահայք (հարեւան Աճարբայլան¹³ (պատմական Ատրպատական) արաբական նահանգի կազմում), որտեղ նա հայոց 326+9=335ին (886/7ին) դաւաճանութեամբ սպանուելու էր¹⁴:

Աշոտ Բագրատունու ամբողջ գործունէութիւնը խալիֆայի կողմից իր պաշտօնական նշանակումից (863ի սկզբներին) ի վեր աւելի շատ մեզ յիշեցնում է Արմինիայի վերադաս արաբ կառավարիչների, կամ նոյնկսկ փոխարքաների իրաւունքներն ու պարտականութիւնները: Այսուհետեւ նա էր ապահովում Արմինիայից գանձուող բոլոր պետական հարկերի մուտքը խալիֆայի գանձարան, նա էր յանձնում 'պահպանագրեր' իր վասալ՝ հայ, վրաց եւ աղուանից իշխաններին ու արաբ ամիրաներին: Աւելին, նրա հրամանատարութեան տակ գործում էր հարիւր-հազարանոց բանակ¹⁵: Դեռ աւելին՝ Աշոտը կարող էր խալիֆային ներկայացնել Արմինիայի կառավարչի թեկնածուն, իսկ

հարկ լինելու դէպքում պաշտօնագրերի նրան, ինչպէս դա տեղի ունեցաւ Ահմադ Իբն Խալիֆի դէպքում:

Աշոտ Բագրատունին յիշեցնում էր Արմինիայի երեք քրիստոնեայ երկրների (Հայքի, Քարթլիի եւ Աղուանքի) լիիրաւ տիրակալի, որի ենթարկուելը աւար խալիֆային արդէն ձեւական բնոյթ էր կրում: Այդ պարագայում բացակայում էր միայն արքայական թագը, այն դէպքում երբ իշխանական թագին - հաւանական է - նա արդէն վաղուց էր արժանացել¹⁶:

Միաժամանակ, պէտք էէ մոռանալ որ, իշխանաց իշխան Աշոտը նշանակուեց «արքունական պատուով», ըստ Դրասխանակերտցու Պատմութիւնի՝ «Եւ այսպէս պատուականագոյն եւ առաջին նա գտեալ եղեւ քան զամենայն նախարարութիւնս Հայոց. եւ ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին՝ որպէս արդարեւ ընդ քազատրական զարմի»: Դրասխանակերտցին շարունակում է իր ճոխ նկարագրութիւնը՝ «զայսպիսիս ապա տեսեալ քաջատոհմիկ պերճութիւնս իշխանացն եւ նախարարացն Հայոց՝ խորհուրդ միաբանական առեալ՝ քազատրեցուցանել զնա ՚ի վերայ ինքեանց, զեկուցանեն ամիրապետին ՚ի ձեռն ոստիկանին Յիսէի՝ որդւոյն Շեխայ: Չոր եւ սիրալիր սրտիւ զարժանահայց խնդիրն ընկալեալ՝ առաքէ ապա Աշոտոյ թագ քազատրական. զոր եւ բերեալ իսկ ոստիկանին Յիսէի ընդ նմին եւ այլ եւս զգեստս քազատրականս, եւ պարգևս եւ պատիւս, եւ երվարս օղապարիկս զինուք եւ զարդուք մատուցանէին առաջի նորա: Կոչեցաւ ապա եւ անդ մեծ հայրապետն Գեորգ եւ զհոգեւոր օրհնութեանցն գովութիւնս աստուածայինս ՚ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակէ զնա քազատր ՚ի վերայ ասքանագեան ազգին»¹⁷:

Հայոց պատմութեան մէջ այնպիսի կարեւոր իրադարձութիւն, ինչպիսին է Աշոտ Բագրատունու պաշտօնական թագադրութիւնը՝ վերջին հայոց պետութեան՝ Արշակունեաց թագաւորութեան (52/86-428) անկումից աւելի քան չորսուկէս դար անց, վաղուց է գրաւել հայ եւ օտար հետազօտողների ուշադրութիւնը: Սակայն, ցաւօք, գիտական պատմագրութիւնում այդպէս էլ չի յաջողուել ձեւաւորել ընդհանուր կարծիք դրա թուագրման շուրջ՝ առաջարկում են մի քանի տարբերակներ 884-888ի միջեւ: Դա Թ.-ԺԲ. դարերի հայ մատենագիրների մօտ գոյութիւն ունեցող տարակարծութիւնների արդիւնք է: Ժամանակակից արաբագիր մատենագիրների մօտ այդպիսի տեղեկութիւն ընդհանրապէս չկայ:

Մենք աւելի հակում ենք դէպի 886ը: Ներկայացնելով մեր տրամադրութեան տակ գտնուող բոլոր պատմական փաստերը՝ փորձենք բացատրել թէ ինչու: Այսպէս՝ ԺԱ. դարասկզբի պատմիչ Ասողիկի պատումի համաձայն, Աշոտը «...նախ քան զքազատրութիւնն երեսնամեայ ժամանակօք իշխան եւ իշխանաց իշխան եղեալ Հայոց եւ Վրաց...»: Հայ մատենագիրը նոյնակ որոշակիացնում է թագադրման ժամանակը՝ հայոց 336ի (887/8), կամ քրիստոնէական 888ի, կամ էլ Գէորգ Բ. կաթողիկոսի 12րդ տարում (887/8)¹⁸:

Բոլոր երեք տարբերակները համընկնում են 888ի առաջին եռամսեակին, քանզի հայոց 336ը, մեր հաշուարկով, աւարտուեց 888 Ապրիլի 16ին: Այդ նոյն հայոց 336 թուականը կարելի է գտնել Պատմութիւն Աշխարհի երկրի ժամանակակից թարգմանութիւններում¹⁹: Դասիւրանցին՝ շարունակելով, յայտնում է թէ ինչպէս Աշոտը չորս տարի անց վախճանուեց²⁰:

Առաջին հայեացքից թվում է թէ տարակարծութիւնների տեղիք այլեւս չկայ: Սակայն Արծրունին Աշոտ Բագրատունուն արքայ տիտղոսով է կոչում, երբ Գրիգոր-Դերենիկի փախուստից յետոյ Վասպուրականի իշխանութիւնը ստանձնեց վերջինիս իննամեայ որդի Աշոտը, որը, մատենագրի վկայութեամբ, ծնունդ է հայոց 326ին (877/8ին)²¹: Ստացւում է, որ հայոց 326+9=335ին (886/7ին) Աշոտը արդէն թագաւոր էր ԺԲ. դարի պատմիչ Սամուէլ Անեցու համաձայն՝ թագադրումը տեղի է ունեցել հայոց 334ին (885/6ին)²²: Բայց սա էլ վերջը չի խնդրին: Ասողիկի վերոյիշեալ պատումում պահպանուել է մի տեղեկութիւն, որը որոշ չափով լուսաբանում է այս բարդ խնդիրը: Այնտեղ աւելում է, որ Աշոտի թագադրումը տեղի ունեցաւ «...յատուրս Վասիլ յունաց քագաւորին եւ կամակցութեամբ նորին...»²³: Խօսքը բիւզանդական կայսր Վասիլ Ա.ի (867-886) մասին է: Ցաւօք, այնպիսի հեղինակաւոր պատմիչ, ինչպիսին է Դրասխանակերտցին, որը մանրամասնօրէն նկարագրում է թագադրման պաշտօնական արարողութիւնը, թուագրումը չի նշել: Այնինչ մենք ուղղակի համոզուած ենք որ նա անձամբ պէտք է մասնակցած լինէր այդ պետական ծէսին: Փոխարէնը նա գրում է. «...մեծ Կայսրն Յունաց Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան եւ նուաճութեան եւ սիրոյ հաստատել ընդ արքային մերոյ Աշոտոյ՝ որդի սիրելի զնա անուանելով եւ հաղորդակից կացուցանելով յամենայն քագաւորութիւնս տէրութեան իւրոյ»²⁴:

Այսպիսով, Աշոտ Բագրատունին հասցրեց թագաւոր դառնալ Վասիլ Ա. կայսրի օրօք, իսկ պատմագիտութեանը յստակ յայտնի է, որ նա վախճանուել է 886ի Օգոստոսի 29ին: Հիմա տեղին է մէջբերել հատուած մէկ ալ սկզբնաղբիւրից՝ Պատմութիւն Տանն Արծրունեաց: Աշոտը, իշխելով «...եւ ամ յիշխանական ճոխութեան, ին ամ յիշխանաց իշխանական պետութեանն, դ ամ ի քագակապ շրջութեանն. եւ մեռաւ յթ [339] բուականութեան հայոց...»²⁵:

Աշոտի քառամեայ թագաւորութեան մասին գրում էր նաեւ - ինչպէս տեսանք - Դասխանակերտցին: Դրա համար էլ՝ հետեւելով այս հատուածին, մենք գալիս ենք վերջնական եզրակացութեան՝ հայոց 339-4=335ին, որի սկիզբը, մեր հաշուարկով, համապատասխանում է 886 Ապրիլի 18ին: Հետեւաբար, Աշոտ Բագրատունին կարող էր թագադրուել 886 Ապրիլի 18ից մինչեւ Օգոստոսի 29 ընկած ժամանակաշրջանում:

Եւ այսպէս, հայոց թագաւոր, հայ Բագրատունիների արքայատոհմի հիմնադիր, Աշոտ Ա. թագադրուել է 886ի կէսերին եւ թագաւորել 4 տարի, այսինքն՝ մինչեւ 890ի կէսերը: Ինչ վերաբերում է «իշխանաց իշխան» եւ «սպարապետ» բարձրաստիճան տիտղոսներին ու պաշտօններին, այնուհետեւ դրանք ստանում են իշխող արքայատոհմի ներկայացուցիչները՝ հիմնականում՝ հայոց թագաժառանգները²⁶:

Դրասխանակերտցու երկից մենք իմացանք, որ թագը Բաղդադից Աշոտին բերեց՝ Իսա Իբն Ալ-Շալիս Ալ-Շալբանին, որը, ինչպէս վերը նշուեց, փախուստի դիմեց Արմինիյա նահանգից Բարդալի ամիր Մուհամմադ Իբն Ալի Ալ-Վահդի Ալ-Շամանիի խռովութիւնից յետոյ: Սակայն, որոշ ժամանակ անց, ինչպէս հաւաստում է Արծրունին՝ «...զաշխարհն [հայոց] Յիսկ որդին Շեհայ բոնագրօսեալ յիմքն գրաւեաց...»²⁷: Մենք արդէն գիտենք նաեւ, որ նա շարունակում էր պայքարը խռովարար Ալ-Շամանիի հետ 13 տարի: Ստացւում է որ պայքարը շարունակուեց մինչեւ 890, քանզի Բարդալի ամիրի խռովութիւնը, ինչպէս ցոյց

տուեցինք, սկսուեց մօտ 877ին: Այս ամէնը վկայում է, որ 'Իսան շատ մեծ ղժուարութեամբ կարողացաւ վերականգնել իր դիրքերը Արմինիայում, իսկ նահանգի կառավարչի պաշտօնին նա մնաց անգամ հայոց թագաւորութեան հռչակումից յետոյ:

Ինչպէս յետագայում արտայայտուում է Սամուէլ Անեցին՝ «...ի քազաւորել Բագրատունեացն ազգի թւալեւ եւ նոցա [ազգի Իսմայելի] հրամանաւ...»²⁸: Այստեղից հետեւում է, որ Աշոտը 886ից յետոյ էլ շարունակում է փաստացի կատարել խալիֆայի լիազօր ներկայացուցչի (կառավարչի, կամ էլ փոխարքայի) պարտականութիւնները արդէն նախկին Արմինիայում: Այդ դէպքում Աշոտի արքայական թագը կարելի է դիտարկել որպէս Ալ-Մու'թամիդ խալիֆային պարտադրուած զիջում, որով նա փորձում էր պահպանել, իսկ աւելի ճիշդ՝ ժամանակաւորապէս երկարաձգել խալիֆայութեան քաղաքական եւ տնտեսական ազդեցութիւնը տարածաշրջանում²⁹: Մանաւանդ որ այն պէտք է փոխարինէր Աշոտի հաւանական իշխանական թագը: Զի կարելի բացառել այն հնարաւորութիւնը, որ խալիֆայի մերժման պարագայում Աշոտը արքայական թագ ստանալու նպատակով կը դիմէր իր հեռաւոր հայրենակցին՝ Բիւզանդիոնի Վասիլ Ա. կայսրին, որը արդէն վաղուց աշխուժացրել էր իր արեւելեան քաղաքականութիւնը³⁰: Խալիֆայութեան համար վատագոյն տարրերակը կարող էր դառնալ հայոց անկախութեան միակողմանի ինքնահռչակումը, որը այս բարդ տարածաշրջանում եւ այս բարդ ժամանակաշրջանում կը ստեղծէր պայթիւնափտանդ իրավիճակ՝ անկանխատեսելի հետեւանքներով:

Այնուամենայնիւ, եւ միջնադարեան հայ մատենագրութիւնում, եւ ժամանակակից պատմագիտութիւնում Աշոտ Բագրատունին համարւում է հայ Բագրատունիների թագաւորութեան (886-1045) Բագարան (մինչեւ 892) եւ Երազաւորու/Շիրակաշատ (մինչեւ 928) նախնական մայրաքաղաքներով եւ բազմադարեան ընդմիջումից յետոյ վերածնունդ Մեծ Հայքի պետականութեան հիմնադիր: Նա արդարօրէն կոչւում է Աշոտ Ա. Մեծ (886-890):

Աշոտի մահից յետոյ արքայական իշխանութիւնը ստանձնեց իր որդին՝ Սմբատ Ա. (890/1-914): Եւ ահա Դրասխանակերտցին դարձեալ գեղեցիկ ձեւով նկարագրում է թագադրութեան հանդիսաւոր ծէսը. «...քազ արքայութեան նմա բերեալ մատուցանի յիշխանէ անտի Իսմայէլեանն Ափշնէ, որ յԱտրպատականի»³¹: 'ի հրամանէ ամիրապետին իւրեանց. ընդ նմին եւ ոսկիակոտ զգեստ, եւ նոյն իբրեւ օղապարիկս 'ի զարդս եւ 'ի զէնս ոսկիակոտս պճնապայծառս, որում ապա ընդ առաջ 'ի թեւտրոն անդ եկեալ՝ դարձեալ դառնան յեկեղեցին սուրբ եւ հայրապետն Գեորգ ընդ նոսա: Եւ անդ աւարտեալ 'ի վերայ գնուիրական աղօթսն՝ եւ ածեալ 'ի գիծս եւ 'ի գիրս եւ 'ի նկարս տեսականս զոսկեճամուկ զգեցութիւնսն, եւ եղեալ 'ի գլուխ զքազ քազաւորութեան նորա՝ ելանէր 'ի հոգետր առագաստէ անտի պայազատել զքնաւ Հայաստանեայս»³²: Այնուհետեւ՝ «...Կայսր [Լեւոն Զ. (886-912)]... մեծամեծս նմա ընձեռէր պարգեւս եւ պատիւս գեղեցիկ զինուոց եւ զարդուոց եւ ոսկեհոտ հանդերձ զգեստուոց, եւ ընպակս եւ բաժակս, եւ կամարս ականակապս 'ի համակ ոսկոյ. այլ եւ մեծ քան զայն այն էր, զի որդի սիրելի Կայսր զՍմբատ իւր անուանէր՝ սիրալիր դաշամբք ուխտից»³³:

Ինչպէս վկայում է Դրասխանակերտցին, նորաստեղծ հայոց պետութեան սահմաններն մի փոքր ընդլայնուեցին: Աշոտ Ա. թագադրումից անմիջապէս

յետոյ «...քնակիչսն Գուգարաց եւ... մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր...»³⁴։ Թագաժառանգ Սմբատը հօր մահուան օրերին, այսինքն 890ի կէսերին, նոյնպէս զբաղուած էր Գուգարք աշխարհի նուաճումով³⁵։

Հետեւաբար, պատմական Մեծ Հայքի Գուգարք եւ Ուտիք աշխարհների մի շարք գաւառներ (միայն թէ ոչ Կղարջքը, ոչ էլ Գանձակ ու Բարդաւ քաղաքների շրջակայքը), որոնք Հարաւային Կովկասում Սասանեան Իրանի գերիշխանութեան հաստատումից ի վեր գտնուում էին հարեւան Քարթլիի եւ Աղուանքի կազմում՝ համապատասխանաբար, Աշոտ Ա-ի կողմից վերամիաւորուեցին հայոց թագաւորութեանը։ Եւ եթէ Ուտիքի մի մասը ընդգրկուեց Մեծ Հայքի կազմում, ապա կարելի է ենթադրել, որ դրանից հարաւ-արեւմուտք գտնուող պատմական Մեծ Հայքի Արցախ ու Սիւնիք աշխարհները, որոնք Խալիֆայութեան գերիշխանութեան հաստատումից ի վեր գտնուում էին հարեւան Աղուանքի կազմում³⁶, նոյնպէս վերամիաւորուեցին հայոց թագաւորութեանը։ Դա է պահանջում նրանց աշխարհագրական դիրքը՝ Ուտիքի եւ պատմական Մեծ Հայքի կենտրոնական Այրարատ Աշխարհի միջեւ։ Յամենայն դէպս, ստորեւ մենք ցոյց կը տանք, թէ ինչպէս Աղուանից արքաները՝ Ժ. դարի սկզբին ետ էին խլում հայ Բագրատունիների ձեռքից Արցախի եւ Ուտիքի հիւսիսային Գարդման, Փառնէս եւ Քուստի գաւառները։

Միեւնոյն ժամանակ հայ Բագրատունիների թագաւորութեան կազմում չընդգրկուեց Մեծ Հայքի հիւսիս-արեւմտեան Տայք աշխարհը։ Հարեւան Կղարջք գաւառի հետ մէկտեղ Թ. դարի սկզբներից այն դարձել էր վրաց Բագրատունիների արքունի երկիրը՝ Տաօ-Կլարջէթի անուամբ³⁷։

Հարկ է յստակացնել, սակայն, որ հայ Բագրատունիների արքունի երկիրը հայոց թագաւորութեան ամբողջ տարածքը չէր ընդգրկում։ Թ.-Ժ. դարի սահմանագծին նրա վարչաքաղաքական քարտէզին կարելի էր գտնել մեծ թուով ժառանգական ինքնավար իշխանութիւններ, որտեղ տիրում էին Բագրատունիների կողային ճիւղերն ու այլ հայկական տոհմեր, ինչպէս նաեւ մեծ թուով արարա-մահմեդական ժառանգական ամիրայութիւններ։ Հայկական կազմաւորումներից էին՝ Բագրատունիների իշխանութիւնները Տարօնում (Մուշ կենտրոնով) եւ Մոկսում (համանուն կենտրոնով), Արծրունիներինը Վասպուրականում (Վան կենտրոնով) եւ Անձեւացիքում (Կանգավար կենտրոնով), Սիւնիներինը Սիսականում (Կապան կենտրոնով) եւ Վայոց Ձորում (Եղեգիս կենտրոնով)։ Արաքական կազմաւորումներից էին՝ Չուրարիկների (Արզան կենտրոնով) ու Կայսիկների (Կալիկլաւ-Կարին կենտրոնով) ամիրայութիւնները, ինչպէս նաեւ ինքնավար քաղաք-ամիրայութիւնները նոյն Կայսիկների՝ Արջիւում (Արճէշ) եւ Խիլատում (Խլաթ), Ուսմանիկներինը Բարկրիում (Բերկրի) եւ միակ ոչ-ժառանգական ամիրայութիւնը Դաբիւում (Դուին)։

Արմինիյա արաքական նահանգի լուծարումով բացի Մեծ Հայքի թագաւորութիւնից, մերձկասպեան շրջանի անկախ մահմեդական ամիրայութիւններից, նրա տարածքում կազմաւորում-վերածնում են միւս երկու քրիստոնեայ պետութիւնները՝ Աղուանքն ու Քարթլին։

Դասիււերանցու վկայութեամբ՝ «ապա բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւն. այսք՝ ի միում ժամանակի գործեցան»³⁸։

ԱՂՈՒԱՆԻՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Այսպիսով, մի քանի դար անց (510-ից ի վեր), մօտ 886-ին վերածնունդ է եւ Աղուանից Թագաւորութիւնը, որի հիմնադիրը Համամն է։ Համամը պատմիչի մօտ կոչւում է եղբայրասպան, եւ իր մեղքերը քաւելու համար սկսեց բարեգործութեամբ զբաղուել։ Մեծ փրկագնի դիմաց նա ազատեց արաբական գերութիւնից հայոց կաթողիկոս Գէորգ Բ-ը, որ յետագայում հայոց 342-ին (893/4-ին) Պարտաւի բանտն էր նետուելու³⁹։ Դրասխանակերտցու մօտ Համամը կոչւում է «մեծ իշխանն արեւելից», իսկ Ասողիկի մօտ՝ «Համամ Արեւելից»⁴⁰, եւ՝ «Համամ Աղուանից քազատը»⁴¹։

Ո՛վ էր այդ Համամը։ Դասխուրանցու մօտ պահպանուել են տեղեկութիւններ, որոնք լուսաբանում են նրա անձը։ Պատմիչը գրում է, թէ Համամի կողմից անկախութեան հռչակումից 4 տարի անց «...սպանանի Պօլի Աղուանից իշխանն հայկազուն յիւրմէ հարազատէ 'ի Սմբատայ. եւ եղի այն սուգ մեծ իւրայնոցն զարմից»⁴²։ Աղուանքում, հաւանական է, սպանուեց արքայի թագաժառանգը՝ Համամի աւագ որդին։ Այնուհետեւ Պատմութիւն Աղուանից Աշխարհի երկի իԳ. գլխում՝ «Կրկնաքանութիւն Ազգաշար Անուանց Համառօտաբար» վերնագրով, կարդում ենք, թէ ինչպէս Սահլի (=Սահակի՝ Սմբատ Բագրատունու որդու⁴³) ծոռը, վերոյիշեալ (Ա)պո(ւ)լին, սպանուեց Սմբատի կողմից։ Սպանուածը Սիւնեաց տէր Սահլի որդու Ատրնբրսէհի որդու Գրիգորի որդին էր⁴⁴։ Այս պատումներից հետեւում է, որ Սահլի թոռ Գրիգորը նոյն Համամն է⁴⁵, որը դարձաւ Աղուանքի իշխան իր հօր՝ Ատրնբրսէհի մահից յետոյ (մօտ 859-ին)։ Այսպիսով, Աղուանքի առաջին արքայ Գրիգոր-Համամը (886-?) Սմբատ Բագրատունու որդու Սահլի՝ աղուանից Բագրատունիների իշխանական տոհմի հիմնադրի, սերնդից էր։

Դրասխանակերտցին պատմում է, թէ ինչպէս նա հայոց 358-ի ձմեռանը (909-910-ի ձմեռ) արդէն վեհափառի պատուաստիճանում, երկրից երկիր, քաղաքից քաղաք թափառելով, հանգրուանեց Աղուանքում՝ Ատրնբրսէհ (?-?) արքայի ու Սահակ մեծ իշխանի մօտ⁴⁶։ Համաձայն Դասխուրանցու՝ Գրիգոր(-Համամ)ն ունէր երկու որդի՝ աւագի անունն էր Սահակ, որը Սեւադա էր կոչւում, կրտսերինը՝ Ատրնբրսէհ⁴⁷։ Հետեւաբար՝ Գրիգոր-Համամի մահից յետոյ գերագոյն իշխանութիւնը Աղուանքում ժառանգեցին նրա որդիները՝ Ատրնբրսէհը (որպէս արքայ), չնայած որ նա կրտսերն էր, եւ Սահակ-Սեւադան (որպէս մեծ իշխան)։

Շատ հաւանական է, որ Աղուանքի արքաներին թագադրում էին հայոց արքաները, ինչպէս դա տեղի էր ունենում հարեւան Քարթլիում։ Աղուանից արքայի վերոյիշեալ տիտղոսները՝ «մեծ իշխանն արեւելից» եւ «Համամ Արեւելից» դրա վառ ապացոյցն են։ Սակայն Դասխուրանցու մօտ գրուած է հետեւեալը. «ընդ որում [Սահակ-Սեւադա] եւ բազմաջան հրաքիւք քազատրն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց ստերիւրել գնա 'ի կամս իր»⁴⁸։ Այս տեղեկութիւնը վերաբերում է Աղուանքի երկրորդ արքայ՝ Ատրնբրսէհի գահակալման տարիներին։ Միեւնոյն ժամանակ դա հաւաստում է, որ Աղուանից արքաները, եթէ նոյնիսկ թագադրուած լինէին հայոց արքաների կողմից, ոչ-միշտ էին պատրաստ ճանաչել վերջիններիս սիւզերէնի գերագոյն իրաւունքը։

Ժամանակակից պատմագրութիւնում, ի տարբերութիւն այն տարածուած կարծիքի, թէ՛ վերածնունդ Աղուանից Թագաւորութիւնը ընդգրկում էր միայն «Բուն աշխարհի Աղուանից» պատմական տարածքը (Անդրկուրիան, կամ Զախափնեայ Աղուանք), մենք կարծում ենք, որ արդէն Գրիգոր-Համամի օրօք նրան կցուեց Խաչենի իշխանութիւնը։ «Գրիգոր շինէ զՀաւախաղացին բերդն, եւ յայն կողմն [Տրտու գետին] ձգէ զձեռն իւրոյ իշխանութեանն» ինչպէս գրում է Դասխուրանցին⁴⁹։ Բանն այն է, որ այդ Հաւ(ք)ախաղաց(ի) բերդը կառուցուել է Վերին Խաչեն Գաւառում (Արցախի պատմական Վալկունիք Գաւառ), Տրտու (այժմ՝ Թարթառ) գետի աջ ափին⁵⁰։ Այն որ Համամի իշխանութիւնը տարածուած էր պատմական Մեծ Հայքի արեւելեան աշխարհների վրայ դարձեալ վկայում են նոյն տիտղոսները՝ «մեծ իշխանն արեւելից» եւ «Համամ Արեւելցի»։ Մի փոքր աւելի ուշ, Ատրնեբսէհի օրօք, ինչպէս հաւաստիացնում է մեզ Պատմութիւն Աղուանից Աշխարհի Գ. հատորի հեղինակը, Աղուանից մեծ իշխան Սահակ-Սեւադան նուաճում է (Արցախի եւ Ուտիքի) հիւսիսային Գարդմանա (Գարդման), Փառնա (Փառնէս) ու Քաւսա (Քուստի) գաւառները⁵¹։

Այսպիսով, Աղուանից Թագաւորութեան սահմաններն թ.-թ. դարի սահմանագլխին, «Բուն աշխարհի Աղուանից» երկրամասից բացի, ընդգրկեցին նաեւ Աջափնեայ Աղուանքի մի շարք գաւառներ (առանց Գանձակ, Բայլական ու Բարդաւ քաղաքների, որոնք 897ին արաբական Աճարբայջան նահանգում - պատմական Ատրպատականում - հաստատուած Սաջեան թիւրքական արքայատոհմի (897-929) կողմից բռնակցման ենթարկուեցին)։ Միեւնոյն ժամանակ Աջափնեայ Աղուանքի տարածքում ձեւաւորուեցին ինքնավար ժառանգական իշխանութիւններ՝ Խաչենը Հաւ(ք)ախաղաց(ի) կենտրոնով եւ Փառխոսը համանուն կենտրոնով։ Այնտեղ իշխելու էին աղուանից Բագրատունիների կողային ճիւղերը։ Վերականգնուած թագաւորութեան մայրաքաղաք դարձաւ Շաքի/Շաքէն (Նուխպատո)՝ Սահլ Բագրատունու կողմից հիմնադրուած միացեալ աղուանից Բագրատունիների իշխանութեան կենտրոնը։

ՎՐԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Արաբական Արմինիյա նահանգի տարածքում ձեւաւորուած քրիստոնեայ երրորդ պետութիւնը վրաց Բագրատունիների թագաւորութիւնն էր, որը նոյնպէս ազգականական սերտ կապի մէջ էր Հայ Բագրատունիների թագաւորութեան հետ։ Դրասխանակերտցու վկայութեամբ՝ Աշոտ Ա-ի մահից յետոյ, նրա որդու՝ Սմբատի մօտ է գալիս (մօտ 891ին) վրաց մեծ իշխան Ատրնեբսէհը (Ադարնասէն), որին նա սկզբում բանտ է նետում, ապա՝ ազատ արձակում⁵² եւ՝ «...քազ կապեալ մնա մեծապատիւ ճոխութեամբ եւ զեղեցկայարմար զարդու, մաւել զինու զարդարեալ ըստ օրինակ քազատրաց՝ կացուցանէ [Սմբատ] զնա քազատր վրաց աշխարհին եւ երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ»⁵³։ Վրաց պատմութեան մէջ այս կարեւորագոյն իրադարձութիւնը կաթողիկոս-պատմիչը թուագրում է Մաշտոց Ա. հայրագետի (897-898) մահից եւ իր ձեռնադրումից (898) անմիջապէս յետոյ⁵⁴։

Անանուն վրաց պատմիչը այդ Ադարնասէի մասին գրում է. «Եկան Գուրգէն [Կիւրապաղատը] եւ Ադարնասէն, Դաւիթ [Կիւրապաղատի] որդին, որոնց օժանդակում էին հայերը, կոտի մտան Կուրի ափերին, պարտութեան մատնեցին ափսազներին եւ սպանեցին Նասրային...»⁵⁵։ Խօսքը Քարթլին

տիրելու համար հայ-ափսազական հակամարտութեան է վերաբերում, որն սկսուեց 881ին⁵⁶։ ԺԱ. դարի վրաց պատմիչ Սումբատ Դաւիթիսձէն այդ երկարամեայ հակամարտութեան վճռորոշ ճակատամարտը թուագրում է քրոնիկոն 108(+780=888)ին։ Նա հաստատում է, որ Դաւիթ Կիւրապաղատի որդուն՝ Աղարնասէին թագաւոր օծեցին։ Այնուհետեւ նա գրում է Աղարնասէ արքայի եւ Գուրգէն Կիւրապաղատի միջեւ պայքարի, քրոնիկոն 111(+780=891)ին վերջինիս սպանութեան մասին եւ՝ թէ ինչպէս նա իրենից յետոյ երկու որդի թողեց, որոնցից մէկին էլ՝ Աշոտին, կոչում է «էրիստատ էրիստալի» (իշխանաց իշխան)⁵⁷։

Հետեւաբար, Աղարնասէն՝ վրաց Բագրատունիների իշխանատոհմի հիմնադիր Աշոտ մեծ Կիւրապաղատի ծոռը, Գուրգէնին 891ին յաղթելուց անմիջապէս յետոյ դարձաւ գահերէց իշխան «մեծ Կիւրապաղատ» տիտղոսով⁵⁸, ինչպէս եւ իր բոլոր նախորդները, եւ միայն դրանից յետոյ մօտ 898ին պաշտօնապէս թագադրուեց վրաց արքայ։

Եւ այսպէս, Մեծ Հայքից հիւսիս-արեւմուտք ձեւաւորուում է թագաւորութիւն Արտանուջ բերդաքաղաք մայրաքաղաքով՝ Աշոտ մեծ Կիւրապաղատի կողմից հիմնադրուած վրաց Բագրատունիների իշխանութեան կենտրոնովը։ Այդ պետութիւնը, որի հիմնադիրը դարձաւ Աղարնասէ Ա.ը (898-923)՝ վրաց Բագրատունիների տոհմից առաջին թագադրուած ներկայացուցիչը, հիմնականում զբաղեցնում էր Տաօ (Տայք) աշխարհը եւ Գուլարէթի (Գուգարք) աշխարհի Կլարջէթի (Կղարջք) գաւառը։ Ահա թէ որտեղից է նրա նախնական անուանումը՝ Տաօ-Կլարջէթի, որի հովանու ներքոյ շուրջ երկու դար անց մէկ միասնական պետութեան (Սաքարթուլո) կազմում Թբիլիսի մայրաքաղաքով կը համախմբուեն բոլոր վրացական եւ ափսազական հողերը։

Սակայն Թ.-Ժ. դարի սահմանազլխին արեւելեան եւ հարաւ-արեւմտեան Վրաստանի վարչաքաղաքական քարտէզին, բացի վրաց Բագրատունիների արքունի երկրից Գուլարէթի, Շիրա Քարթլի եւ Էգրի (Աջարիա) աշխարհներում, կարելի էր գտնել դեռ Ը. դարում ձեւաւորուած ինքնավար Կախէթի իշխանութիւնը (Մանարիա) Թելաւի կենտրոնով, որտեղ տիրում էին Գրիգորի (մօտ 787-826) սերունդները, եւ արաբական, սկզբնական շրջանում ոչ-ժառանգական, Թիֆլիսի ամիրայութիւնը։

Արծրունու վկայութեամբ՝ Սմբատ «...քազաւորն ղեսպանս արարեալ յամենայն տահմանս տէրութեան Հայոց, Վրաց եւ Աղուանից, եւ առ քաղաքացիսն եւ հազարապետս եւ գաւառակալս, եւ որք սիրողաբար առ նա զհնազանդութեանն հարկ հարկանէին»⁵⁹։ Դրասխանակերտցին վրաց մեծ իշխանի՝ Աղարնասէ Կիւրապաղատի մասին գրելով, յատուկ ընդգծում է, որ Հայոց արքային նա «...մեծաւ պատկառանք իբրեւ հօր հնազանդ լեալ, կամ թէ եւս առաւել քան զայս՝ իբրեւ զծառայ...»⁶⁰։

Այն անհրաժեշտ փաստը, որ Արմինիայի լուծարումից յետոյ Մեծ Հայք թագաւորութեան սիւզերէնութիւնը ընդունում էր վրաց թագաւորութիւնը հաստատում է նաեւ արաբ պատմիչ Իբն Զաֆիրը, որ Հայոց առաջին արքաներին կոչում է «ملك أرمينية وحرز ان» (Հայոց եւ վրաց արքայ)⁶¹։ ԺԱ. դարի պատմիչ Կեղծ-Շապուհ Բագրատունու մօտ Աշոտ Ա.ի որդի Սմայատը (Սմբատ Ա.) նոյնպէս կոչւում է «հայոց եւ վրաց քազաւոր» տիտղոսով⁶²։ Այնտեղ գրուած է

նաեւ. «Եւ նայ [Սմայատ] տիրեաց ամենայն աշխարհին հայոց եւ ընդ ձեռամբ էաժ զՀայք, զՏայք, զՎիրք եւ զԱղուանք...»⁶³։

Դրասխանակերտցին մանրակրկիտ ցոյց է տալիս Հայ Բագրատունիների գերիշխանութեան տակ գտնուող տարածքների հիւսիսային սահմաններն Սմբատ Ա-ի օրօք՝ «Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարեւմտից հիւսիսոյ մինչեւ զԿարմոյ քաղաք, եւ անդր եւս քան զԿղարջս՝ քերեալ մինչեւ առ ափն ծովուն մեծի (այսինքն՝ Սեւ - Ա.Ը.), եւ մինչեւ ցաւհմանս Եգեքացոց եւ մինչեւ ցատորոտ մեծի լեռինն Կովկասու, զԳուգարացիս եւ զԾանարս մինչեւ ցԴուռն Ալանաց, առեալ եւս յինքն եւ զամրոց դրան պահակի նոցա. եւ անտի ՚ի հարաւակողմն կոյս զԿուր գետու մինչեւ ՚ի քաղաքն Տփլիս. եւ զՈւտի գաւառ մինչեւ ՚ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ՚ի Տուս եւ ՚ի Շամքոր»⁶⁴։ Ապա Սմբատը «...ընդ լծով արքունի սակից եւ քեկարաց եւ մաքսից կացուցանեալ...» հիւսիսում հպատակեցրած բոլոր երկրները⁶⁵։

Այսպիսով, հարաւային Կովկասի վերածնունդը քրիստոնեայ երկու պետութիւններն էլ, որոնք ոչ միայն սերտ ազգակցական կապի մէջ էին գտնուում Հայ Բագրատունիների թագաւորութեան հետ, այլեւ՝ գտնուում էին վերջինիս ռազմա-քաղաքական ազդեցութեան ոլորտում, Սմբատ Ա. Բագրատունու օրօք յայտնուեցին Հայոց թագաւորութեան արտաքին սահմանների ներքոյ։ Այնպէս որ վրաց եւ աղուանից թագաւորութիւնների եւ իրենց բազմաթիւ վասալ աւատական կազմաւորումների պետական ինքնիշխանութիւնը սահմանափակուում էր Հայ Բագրատունիների գերագոյն իշխանութեամբ։ Հետեւաբար, Հայկական Լեռնաշխարհի եւ Հարաւային Կովկասի քաղաքական քարտեզին թ.-Ժ. դարի սահմանագլխին ձեւաւորուեց մի հսկայ գերտէրութիւն, որը մենք առաջարկում ենք կոչել Հայոց Կայսրութիւն՝ վերջինը Հայոց պատմութեան մէջ։ Դա կայսրութիւն էր այն պարզ պատճառով, որ ձեւաւորել էր կայսերական քաղաքականութեան դաշտ։ Կենտրոնական (Հայ Բագրատունիների) միապետական իշխանութեան ներքոյ մէկ պետական տարածութեան շրջանակում համախմբուած էին տարբեր սոցիալական եւ մշակութային կացութեւնների, դաւանանքների ժողովուրդներ (արաբներ, աղուանցիներ, Հայեր, քարթուկացիներ եւն.), իսկ ամենակարեւորը՝ բազմաթիւ քաղաքական միաւորներ՝ թագաւորութիւններ, իշխանութիւններ ու ամիրայութիւններ։ Հայոց Կայսրութեան ձեւաւորումը օրինաչափ երեւոյթ էր, քանզի յոգուածում մենք ցոյց տուեցինք թէ ինչպէս արդէն արաբական Արմինիայի գոյութեան վերջին տարիներին տեղի բոլոր Հայ, վրաց եւ աղուանից իշխաններն ու արաբ ամիրաները ընդունում են Հայոց իշխանաց իշխան Աշոտ Ե. Բագրատունու սիւզերէնի գերագոյն իրաւունքը։

ՀԱՅՈՑ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ

Հայոց Կայսրութեան հարաւային սահմաններն համընկնում էին արաբական Ալ-Ջազիրա եւ Աճարբայջան նահանգների հետ Արմինիայի ունեցած նախկին վարչական սահմաններին։ Արեւմտեան սահմաններն՝ իրաւիֆայութեան Բիւզանդական Կայսրութեան հետ ունեցած սահմանի նախկին Հայկական հատուածին։ Արեւելեան սահմաններն ձգւում էին մինչեւ Բարդաւ քաղաքը։ Այս ամէնի մասին է վկայում արաբագիր աշխարհագրական դպրոցի հիմնադիրներից մէկը՝ Ալ-Իսթախրին (մօտ 850-934)՝ «Ալ-Արման քաղաւորու-

քիմը [արեւմուտքից] սահմանակից է Ռումի [Կայսրութեանը], [արեւելքում] նրա սահմաններն ձգում են մինչեւ Բարձա՝ա, [հարաւում] մինչեւ Ալ-Ջազիրա եւ Ածարբայջան: Ռումի կողմից [Արմինիայի] սահմանային առաջին ամրութիւնների գօտին Կալիկական է»⁶⁶:

Մեր նախորդ ուսումնասիրութիւնների ընթացքում մեզ յաջողուել է ճշգրտել Արմինիայի սահմանները բոլոր ուղղութիւններով⁶⁷:

Հայոց Կայսրութեան սահմաններն ու նրա կազմում գտնուող երկրների, երկրամասերի ու աւատական կազմաւորումների ցանկը որոշելուց յետոյ մենք չենք տեսնում որեւէ խոչընդոտ ճշգրտելու ողջ Կայսրութեան եւ նրա մաս կազմող իւրաքանչիւր միաւորի տարածութիւնը 25՝ որ ժամանակակից Հայագիտութեանը եւ կովկասագիտութեանը յայտնի են Պատմական Մեծ Հայքի (Ք.ա. 316-Ք.ե. 428), Քարթլիի (Ք.ա. 299-Ք.ե. 523) ու Աղուանքի (Ք.ա. Բ դար-Ք.ե. 510) տարածութիւնները⁶⁸:

Մեր հաշուարկով Հայոց Կայսրութեան ընդհանուր տարածութիւնը Թ.-Ժ. դարի սահմանադրին կազմել է 236,748 քառ. կլմ., այդ թւում՝

Մեծ Հայք՝ 149,744 քառ. կլմ., այդ թւում՝

Հայ Բագրատունիների Թագաւորութիւն, ներառեալ Արջիշ, Բարկլի, Դաբիլ, Խիլատ եւ Կալիկական ինքնավար քաղաք-ամիրայութիւնների տարածքը՝ 56,492 քառ. կլմ., այդ թւում՝

1. Այրարատ առանց Մաղկոտն ու Կոզովիտ գաւառների՝ 36,970 քառ. կլմ.:
2. Սեպականութիւն Տաշրաց առանց Թոեղք գաւառի՝ 3,530 քառ. կլմ.:
3. Բարձր Հայքի Դերջան, Կարին ու Շաղագոմ գաւառները՝ 5,350 քառ. կլմ.:
4. Վասպուրականի Աղիովիտ, Առքերանի, Գողթն ու Նախճաւան գաւառները՝ 4,220 քառ. կլմ.:
5. Տուրուբերանի Աղիովիտ, Ապահունիք (արեւելեան կէսը), Բզնունիք ու Խոռխորունիք գաւառները՝ 4,687 քառ. կլմ.:
6. Սիւնիքի Գեղա(ր)քունի գաւառը՝ 1,735 քառ. կլմ.:

Տարօնի Բագրատունիների Իշխանութիւն՝ 21,380 քառ. կլմ., այդ թւում՝

1. Տուրուբերանի Ասպակունեաց Ձոր, Խոյթ, Պալունիք ու Տարօն գաւառները՝ 5,515 քառ. կլմ.:
2. Աղձնիքի Սանասունք գաւառը՝ 2,400 քառ. կլմ.:
3. Մոփքի (Չորրորդ Հայքի) բոլոր արեւելեան գաւառները՝ 10,690 քառ. կլմ.:
4. Բարձր Հայքի Մանանդի գաւառը՝ 2,775 քառ. կլմ.:

Մոկսի Բագրատունիների Իշխանութիւն՝ 2,962 քառ. կլմ., այդ թւում՝

1. Մոկք 2,962 քառ. կլմ.:

Վասպուրականի Արծրունեաց Իշխանութիւն՝ 36,742 քառ. կլմ., այդ թւում՝

1. Վասպուրական առանց Բա(ք)րան/Մարանդ, Գաբիթեան, Պարսպատունիք ու վերը թուարկուած բոլոր գաւառները՝ 24,725 քառ. կլմ.:

2. Կորճայք առանց Կորդուք գաւառի՝ 8,882 քառ. կլմ.:
3. Այրարատի Մաղկոտն ու Կոզովիտ գաւառները՝ 3,135 քառ. կլմ.:

Սիսականի Սիւնեաց Իշխանութիւն՝ 6,575 քառ. կլմ., այդ թւում՝

1. Սիւնիք/Սիսականի Արեւիկ, Բաղք, Երնջակ, Մղուկ/Սիսական, Կովսական, Հաբանդ ու Չորք գաւառները՝ 6,575 քառ. կլմ.:

Վայոց Ձորի Սիւնեաց Իշխանութիւն՝ 3,480 քառ. կլմ., այդ թւում՝

1. Սիւնիք/Սիսականի Վայոց Ձոր ու Ճահուկ գաւառները՝ 3,480 քառ. կլմ.:

Չուրարիկների Արաբա-Մահմեդական Ամիրայութիւն՝ 7,707 քառ. կլմ., այդ թւում՝

1. Աղձնիքի մնացած արեւելեան գաւառները՝ 7,307 քառ. կլմ.:
2. Տուրուքերանի Երեւարք գաւառը՝ 400 քառ. կլմ.:

Կախիկների Արաբա-Մահմեդական Ամիրայութիւն՝ 14,406 քառ. կլմ., այդ թւում՝

1. Տուրուքերանի մնացած գաւառները՝ 14,406 քառ. կլմ.:

Քարթլի՝ 45,637 քառ. կլմ., այդ թւում՝

Վրաց Բազրատունիների Թագաւորութիւն՝ 35,292 քառ. կլմ., այդ թւում՝

1. Պատմական Մեծ Հայքի Գուգարք/Գուջարէթի աշխարհի Արտահան/ի, Թոեղք/Թրիալէթի, Կղարջք/Կլարջէթի, Շաւշէթ/ի ու Ջաւախք/ Ջաւախէթի գաւառները՝ 10,620 քառ. կլմ.:
2. Պատմական Մեծ Հայքի Տայք/Տաօ աշխարհը՝ 10,179 քառ. կլմ.:
3. Շիրա Քարթլի առանց Ձելէթի գաւառի՝ 6,235 քառ. կլմ.:
4. Արգուէթի՝ 1,450 քառ. կլմ.:
5. Մեախէթի՝ 4,832 քառ. կլմ.:
6. Էգրի (Աջարիա)՝ 1,976 քառ. կլմ.:

Կախէթի Իշխանութիւն (Մանարիա)՝ 5,920 քառ. կլմ., այդ թւում՝

1. Կախէթի/Կուխէթի առանց Ոստան Քարթլի գաւառի՝ 3,595 քառ. կլմ.:
2. Մանարիա (Ալանաց դռների ամրութիւնների շրջան)՝ 2,325 քառ. կլմ.:

Թիֆլիսի Արաբա-Մահմեդական Ամիրայութիւն՝ 4,425 քառ. կլմ., այդ թւում՝

1. Շիրա Քարթլիի Ձելէթի գաւառը՝ 250 քառ. կլմ.:
2. Կուեմօ Քարթլի՝ 2,625 քառ. կլմ.:
3. Կախէթի/Կուխէթի Ոստան Քարթլի գաւառը՝ 1,550 քառ. կլմ.:

Աղուանք՝ 41,367 քառ. կլմ., այդ թւում՝

Աղուանից Բազրատունիների Թագաւորութիւն՝ 23,002 քառ. կլմ., այդ թւում՝

1. «Բուն աշխարհ Աղուանից»՝ 23, 002 քառ. կլմ.:

Փառխոսի իշխանութիւն՝ 5,855 քառ. կլմ., այդ թւում՝

1. Պատմական Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հիւսիսային Գարդման ու Տուս-Կատակ գաւառները՝ 1,500 քառ. կլմ.:
2. Պատմական Մեծ Հայքի Արցախ աշխարհի հիւսիսային Կողթ, Մեծ Կունեք, Փառնէս ու Քուստի գաւառները՝ 4,355 քառ. կլմ.:

Խաչենի իշխանութիւն՝ 12,510 քառ. կլմ., այդ թւում՝

1. Արցախի մնացած (հարաւային) գաւառները՝ 7,173 քառ. կլմ.:
2. Ուտիքի հարաւ-արեւմտեան Աղուէ, Ռոտ-Պարսեան ու Տուի գաւառները՝ 1,890 քառ. կլմ.:
3. Սիւնիք/Սիսականի Աղաճէճք ու Սողք/Չողէք գաւառները՝ 3,447 քառ. կլմ.:

Եւ այսպէս, արաբական գերիշխանութեան պայմաններում 863-886 ժամանակաշրջանում դրւում են ապագայ ընդարձակ քաղաքական տարածութեան՝ Հայոց Կայսրութեան հիմքերը, որի կորիզը դարձաւ Հայ Բագրատունիների իշխանութիւնը (886ից յետոյ Թագաւորութիւնը): Արաբական Արմինիյա նահանգի վերջնական լուծարումից յետոյ (886ին) Կայսրութիւնը իր արտաքին սահմանների մէջ ընդգրկեց նրա տարածքում Խալիֆայութեան ապակենտրոնացման դարաշրջանում ձեւաւորուած բոլոր քրիստոնեայ իշխանութիւններն եւ Արմինիյա Ա.ի (Հայքի) տարածքում ձեւաւորուած բոլոր մահմեդական ամիրայութիւնները: Հայոց Կայսրութիւնը դարձաւ բնիկ քրիստոնեայ ժողովուրդների՝ պետութիւն գոյացնող Հայերի, կովկասեան աղուանցիների, վրացական եւ այլ իրերա-կովկասեան ազգաբնակչական խմբերի (էզրցիներ/աջարցիներ, կախէթցիներ, ծանարներ, քարթուելացիներ եւն.), ինչպէս նաեւ Արաբիայից եկուոր արաբ-մահմեդական ցեղերի (զուրարիկներ, կայսիկներ, 'ուսմանիկներ եւն.) համար մի հսկայ կուտակում: Աւելին՝ տարածաշրջանում Հայոց Կայսրութեան եւ նրա Հայ արքաների գերիշխանութեան հետ ստիպուած հաշուի նստեցին հարեւան Արեւմտեան Կովկասի կառավարիչները: Խօսքը Քութայիսի մայրաքաղաքով Ափխազաց Թագաւորութեան (787-975) մասին է, որն այդ պահին ընդգրկում էր ոչ միայն բուն ափխազաց տարածքներ, այլեւ՝ արեւմտափրացական: Ահա թէ ինչ է գրում այդ մասին Դրասխանակերտցին՝ «...գթագատրն Եգերացոոց (այսինքն՝ ափխազների - Ա.Ը.) 'ի սեր միաբանութեան ընդ իւր (այսինքն՝ Աշոտ Ա. Բագրատունու - Ա.Ը.) կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմաբար պարտավճար միշտ նմա 'ի ծառայութիւն բերէր»⁸⁰:

Հետեւաբար, Ափխազաց Թագաւորութիւնը յայտնուել էր պաշտօնական Երազգաւորսի քաղաքական ազդեցութեան ոլորտում: Հայկական եւ հարաւ-կովկասեան լեռնաշխարհների քաղաքական քարտէզին ընդարձակ Հայոց Կայսրութեան ձեւաւորման գործընթացում ամենակարեւոր հանգամանքը այն է, որ նրա կառավարիչների արքայական իշխանութիւնը Դէ Եուրէճ ճանաչեցին ժամանակի աշխարհի երկու գերտէրութիւնները՝ Արաբական Խալիֆայութիւնը եւ Բիւզանդական Կայսրութիւնը: Ամէն դէպքում Ալ-Մու'թամիդ խալիֆան շտապեց առաջ ընկնել տարածաշրջանում իր աւանդական հակառակորդից՝ առաջինը ուղարկելով Հայք արքայական թագ: Դրա համար էլ Հայոց

կայսրութիւնը, մի կողմից հաստատելով բարեկրթական յարաբերութիւններ Բիւզանդիայի հետ, միւս կողմից՝ շարունակում էր տարեկան խորհրդանշական գումար փոխանցել իսլամական գանձարան: Պատմութեան մէջ վերջին հայոց կայսրութեան ծնունդը Թ. դարի երկրորդ կէսերին հայ Բագրատունիների վարած հաւասարակշռւած քաղաքականութեան աղիւնք է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Այս ուսումնասիրութիւնը կատարուել է Ռուսական Համադաշնութեան նախագահի դրամաշնորհով՝ ըստ Մ.Դ.-1664.2012.6 ծրագրի, որով պետականօրէն քաջալերւում են պատմութեան երիտասարդ ուսւ գիտնականներ:
- ² Տե՛ս մանրամասն՝ Arsen Shaginian, "Systema Administrativnogo Deleniya I Upravleniya Arabskogo Khalifata V Armenii I Arminiya" (Արաբական իսլամականութեան վարչական բաժանման եւ կառավարման համակարգը Հայաստանում եւ Արմինիայում), *Vestnik Moskovskogo Universiteta*, Ser. 13 (Vostokovedenie), 2008, № 3, էջ 68-85. Նաեւ՝ Արսէն Շահինեան, «Արմինիայ Արաբական Նահանգի Սահմաններն Ու Վարչատարածքային Բաժանումը Ըստ Արաբագիր Սկզբնաղբիւրների», *Հայագիտական Հանդէս*, Հտր. Լ., Պէյրութ, 2010, էջ 319-328:
- ³ Arsen Shaginian, "Gosudarstvennie Nalogi Arminiya" (Արմինիայի պետական հարկերը), *Պատմաբանասիրական Հանդէս*, 2009, 2-3 (181-182), էջ 135-144:
- ⁴ Տե՛ս՝ Arsen Shaginian, "Formirovanie Avtonomnikh Bagratidskikh Knyazestv Na Territorii Arabskoy Provintsii Arminiya V Pervoy Polovine IX V." (Բագրատունեաց ինքնավար իշխանութիւնների ձեւաւորումը արաբական Արմինիայ Նահանգի տարածքում, Թ. դարի առաջին կէսին), *Vestnik Sankt-Peterburgskogo Universiteta*, Ser. 2 (Istoriya), 2008, Vyp. 2, էջ 127-140:
- ⁵ Թովհանուս Կաթողիկոսի *Դրասխանակերտացուոյ Պատմութիւն Հայոց*, Հրատ. Ալեքսանդր Մարգարեան, աշխ. Թարգ. եւ ծանօթ. Գ. Թոսունեանի, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1996, էջ 136:
- ⁶ Թովմա Արծրունի եւ Անանուս, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Հրատ., Թարգ. եւ ծանօթ. Վ. Վարդանեանի, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1985, էջ 322. հմտ. նաեւ՝ *Դրասխանակերտցի*, էջ 138, 139:
- ⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Շահինեան, "Formirovanie", էջ 127-131:
- ⁸ Թովմա Արծրունի, էջ 338-340, 339-341:
- ⁹ Տե՛ս՝ Մովսիսի Կաղանկատուացուոյ *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, Ի յոյս ընծ. Մ. Էմին, Մոսկուա, Տպ. Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց, 1880, էջ 267:
- ¹⁰ Արծրունի, էջ 340-341 եւ 344-347:
- ¹¹ Նոյն, էջ 350-351:
- ¹² Նոյն, էջ 342-343:
- ¹³ Արաբ. *أذربايجان*:
- ¹⁴ Արծրունի, էջ 348-353:
- ¹⁵ *Ար-Բարի Ու Շիրվանի Պատմութիւն*ի անյայտ հեղինակը մեզ յայտնում է Թ. դարի կէսին Արմինիայի կանոնաւոր այրուձիու քանակը՝ 20,000 (տե՛ս՝ *فصول من تاريخ الباب وشروا*). Տե՛ս նաեւ՝ *أذربايجان*, Հրատ. եւ Թարգ. Վ. Մինորսկի, V. Minorsky, *A History Of Shirvan And Darband In The 10th-11th Centuries*, Cambridge, 1958, էջ 4 (A1051b), 45:

Հաշուի առնելով պատմագիտութեանը յայտնի այն փաստը, որ հին եւ միջնադարեան Հայաստանում հեծեկազորի եւ հետեւակազորի քանակների յարաբերակցութիւնը մօտ 1:5 էր, ապա Թ. դարի երկրորդ կէսին հայոց կանոնաւոր քանակի քանակը կարող էր հասնել մինչեւ 100,000-ի, ներառեալ՝ վրաց եւ աղուանից Բագրատունիների զօրքերը:

- Աւելին՝ այդ նոյն քանակին մենք հանդիպում ենք Արծրունու մօտ Հայոց 339 թուականի տակ (890/1 — Արծրունի, էջ 366-367)։
- ¹⁶ Դեռ Ալ-Մու'թասիմ խալիֆայի (833-842) օրօք ՍաՀլ Բազրատունին, որը նշանակուել էր Հայքի, Քարթլիի եւ Աղուանքի գերագոյն կառավարիչ, ստացաւ «իշխանական քազ» (Շահինեան, "Formirovanie", էջ 133)։ Դա է պատճառը, որ մենք չենք բացառում միւս գերագոյն կառավարիչների թագադրման իրականութիւնը։
- ¹⁷ Դրասխանակերտցի, էջ 140-142։ Նիկողայոս Ադոնցը չգիտես ինչու գտնում էր թէ թագը բերեց ոչ թէ Յիսէն ('Իսան), այլ նրա որդի Ահմադը (Նիկողայոս Ադոնց, Պատմական Ուսումնասիրութիւններ, լոյս ընծ. Ա. Խոնդկարեան, Պարիս, Հրատ. Ա. Ղուկասեանի, 1948, էջ 86)։
- ¹⁸ Մտեհանուսի Տարօնեցուոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, աշխ. Ս. Մալխասեանցի, Սանկա-Պետերբուրգ, Տպ. Ի. Ն. Սկորոխոգովի, 1885, էջ 157-158։ Գէորգ Բ. Կաթողիկոսի ընտրութիւնը Ասողիկը թուագրում է Հայոց 324ին (875/6ին)։
- ¹⁹ Տե՛ս օրինակ՝ The History Of The Caucasian Albanians By Movses Dasxuranc'i, trans. C.J.F. Dowsett, London (London Oriental Series, Vol. 8), 1961. նաեւ՝ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, թարգ. Վ. Առաքելեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1969. նաեւ՝ Istoriya Stranei Alwank Movsesa Kalankatwatsi, per. Sh. Smbatiana (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից, թարգ. Շ. Սմբատեանի), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 168։
- ²⁰ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 269։
- ²¹ Արծրունի, էջ 338-339, 354-355։
- ²² Սամուէլի Քահանայի Անեցուոյ Հաւաքմունք Ի Գրոց Պատմագրաց, հրատ. Ա. Տէր-Միքէլեան, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի Տպ., 1893, էջ 95։ Սամուէլ Անեցու մօտ գոյութիւն ունի եւս մէկ, սակայն սխալ, թուական քրիստոնէական թուարկութիւնով՝ 887։
- ²³ Ասողիկ, էջ 157։
- ²⁴ Դրասխանակերտցի, էջ 142։
- ²⁵ Արծրունի, էջ 356-357։
- ²⁶ 886ին Հայոց իշխանաց իշխան դարձաւ Աշոտի որդի թագաժառանգ Սմբատը (Դրասխանակերտցի, էջ 146-147)։ Վերջինիս թագաւորութեան օրօք իշխանաց իշխան դարձաւ նրա եղբայր Դաւիթը, իսկ սպարապետ դարձաւ միւս եղբայր Շապուհը (նոյն, էջ 196-199)։
- ²⁷ Արծրունի, էջ 344, 345։
- ²⁸ Սամուէլ Անեցի, էջ 96։
- ²⁹ Այդ կարծիքին են մեզ մղում Դրասխանակերտցու տեղեկութիւնները։ Պատմիչը հաւաստում է, որ Հայոց թագաւորութիւնը շարունակում էր Խալիֆայութեան պետական զանձարան մուծել խորհրդանշական հարկ (մօտ. 60,000 դահեկան (Դրասխանակերտցի, էջ 216, 217)։ Ընդ որում այդ փոքրիկ գումարի չափը արդէն որոշում էր ոչ թէ խալիֆան, այլ՝ Հայոց արքան (նոյն, էջ 196, 197)։
- ³⁰ Ըստ բիւզանդացի մատենագիր Թէոփանէսի Շարունակողի (Ժ. դար), «...Վասիլ կայսրը, ծագումով Մակեդոնիայից էր, ազգութեամբ հայ Արշակունի» (Թէոփանէսի Շարունակող, թարգ., առաջարան եւ ծանօթ. Հրաչ Բարթիկեանի (Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայքի Մասին, Հտր. 15 - Բիւզանդական Աղբիւրներ. Ե.), Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1990, էջ 127)։ Ժամանակակից հայագէտներ մակեդոնական արքայատոհմի (867-1056) հիմնադրի հայկական ծագումը կասկածի տակ են առնում, իսկ նրա արքայական (Արշակունեաց) արմատները համարում են առասպել, որը լայն տարածում գտաւ Բիւզանդիոնում արեւելեան քաղաքականութեան աշխուժացման շրջանում (տե՛ս նոյն՝ էջ 336, ծանօթ. նաեւ՝ Karen Yuzbashian, "Armyanskiye

Gosudarstva Epokhi Bagratidov I Vizantia IX–XI vv.,” (Հայկական պետութիւնները Բագրատունիների օրօք եւ Բիւզանդիան, Թ.-ԺԱ. դարերում), Մոսկուա, «Գիտութիւն» Հրատ., 1988, էջ 100-104):

- ³¹ Սա հարեւան արարական Աձարրայճան նահանգի արար կառավարիչ Մուհամմադ Աֆշին իրն Արի Աս-Սաջն (889-901) է: Դրասխանակերտցու երկի աշխարհաբարի թարգմանիչ Գ. Թոսունեանը սխալմամբ գտնում է թէ Աֆշինը (Աֆշինը) թագադրում է իբր վրաց թագաւոր Ատրնեբուէ/Ագարնասէին (Դրասխանակերտցի, էջ 149): Հետաքրքիր է նաեւ նշել այս կարեւոր պատմական փաստի մեկնաբանումը արաբագիր մատենագրութիւնում: Այնտեղ խօսւում է որ Ալ-Մու'թամիդ խալիֆան իբր Մուհամմադ Աֆշինին յանձնարարում է գրաւել Արմինիայի կառավարչի պաշտօնը (تاريخ الرسل والملوك لاى جعفر محمد بن جوي العفرى - Annales Quos Scriptis Abu Djafar Mohammed Ibn Djarir At-Tabari, cum aliis ed. M. de Goeje, ser. III, Lugduni Batavorum, 1879-1901, էջ 2185. նաեւ ابن الاثير الكاشي في التاريخ - Ibn Al-Athir, Al-Kamil Fi-l-Tarikh, p. VI, al-Qahira, 1353 A.H. / 1934/5 A.D, էջ 91):

- ³² Դրասխանակերտցի, էջ 148-150:

- ³³ Նոյն, էջ 162:

- ³⁴ Նոյն, էջ 142:

- ³⁵ Նոյն, էջ 146, 147:

- ³⁶ Դրա մասին մանրամասն տե՛ս՝ Շահինեան, «Արմինիյա Արաբական», էջ 319-328:

- ³⁷ Դրա մասին տե՛ս՝ Շահինեան, “Formirovanie”, էջ 127-128: Համաձայն անանուն Մատիանէ Քարչիսա (Ը.-Թ. դդ.) երկի՝ Տաօ-Կլարջեթիի իշխան Աշոտ Կիրապաղատ Բագրատունիի (մօտ 810-828) կրտսեր որդի «...Գուարամը կարողացաւ նուաճել Ջաւախքի, Տրիալքի, Տաշիրի եւ Արցախի ու Արտանի [գաւառները]... Գուարամն էլ բաժանեց երկիրը իր եղբայրներ Ադարնասէի ու Բագրատի միջեւ: [Տաշիրին եւ] Արցախն նա յանձնեց իր աներորդուն՝ հայոց արքային» (Histoire De La Géorgie, trad. par M. Brosset, t. I, St.-Petersbourg, Académie impériale des sciences de St.-Petersbourg, 1849, էջ 269): Այնպէս որ, Գուգարքի Տաշիր գաւառը եւ Այրարատի բռնազաւթուած Աղոցք հիւսիսային գաւառը նոյնպէս վերամիաւորւում են հայոց թագաւորութեանը: Այս պարագայում Գուգարքի մնացած արեւելեան Մորոփոր, Կողքոփոր եւ Ջորոփոր գաւառները, չնայած որ չեն յիշատակւում վրաց հեղինակի մօտ, ըստ երեւոյթին նոյնպէս պէտք է կցուէին հայ Բագրատունիների տիրոյթներին: Տուեալ տարածքային փոփոխութիւնները պէտք է որ տեղի ունենային մօտ 880ին, քանզի Բագրատ Բագրատիոնին վախճանուել է 881ին, իսկ մէկ տարի անց մահացաւ վերոյիշեալ Գուարամը (Histoire De La Géorgie, էջ 271):

- ³⁸ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 269: Զգիտես ինչու Իւզրաշեանը Աղուանից թագաւորութեան վերականգնումը թուադրում է 893ին (Իւզրաշեան, էջ 72):

- ³⁹ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 268-269:

- ⁴⁰ Դրասխանակերտցի, էջ 172-173. նաեւ՝ Ասողիկ, էջ 158-159:

- ⁴¹ Ասողիկ, էջ 161:

- ⁴² Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 269:

- ⁴³ Այդ Սահլի անձի մասին մանրամասն տե՛ս՝ Շահինեան, “Formirovanie”, էջ 129-131:

- ⁴⁴ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 273: Աղոնցի կարծիքով Սահլի տիրոյթները Միւնիքում կարող էին ընդգրկել Սողք Գաւառը (Մեւանի աւազանի հարաւ-արեւմուտք) եւ Արցախի Վալիուլիք Գաւառը (Աղոնց, էջ 136): Այդ տիրոյթները Թ. դարի վերջում միաւորուեցին մէկ ինքնավար իշխանի - համանուն կենտրոնով - իշխանութեան կազմում:

- ⁴⁵ Մենք համաձայն չենք Աղոնցի մեկնաբանութեան, թէ՛ Համամը նոյն Մու(‘)աւի(յ)ա-Յովհաննէսն է (Աղոնց, էջ 130): Մեր կարծիքով Մու'աւիյա-Յովհաննէսը Աղուանքի

- իշխան էր եւ 838ից սկսած մինչեւ արաբների կողմից նրա գերութիւնը 855ին Հալէպի, Քարթիւի ու Աղուանքի գերագոյն կառավարիչն էր (Շահինեան, "Formirovanie", էջ 133-134): Տեղեկութիւններ՝ գերութիւնից նրա վերադարձի մասին, մենք չունենք: Ենթադրենք, նրան յաջողուեց փրկուել գերութիւնից՝ այդ դէպքում ինչու նա՝ երկրի իշխանը, չի կառավարում, այլ՝ նրա եղբայրը՝ Վերջապէս նա չէր կարող կենդանի մնալ մինչեւ այդ թուականները, եթէ կեանքի միջին տեւողութիւնը 70-80 տարի էր: Աւելին, Աղոնցը առաջարկում է նրա թագադրման տարեթիւը համարել 893ը (Աղոնց, էջ 131):
- ⁴⁰ Դրասխանակերտցի, էջ 220-221: Հարկ է նշել, որ Աղոնցը արաբ աշխարհագիր իրն Հաուկայի (Ժ. դ.) մօտ (ՇաքրիՇաքէ երկրի մասին խօսուող հատուածում) 337/948ի տակ յիշատակուող տեղի կառավարչի՝ *أدر بن سمع بن ممان* անունը առաջարկում է կարգաւ այսպէս՝ *أدر بن ممان* (Աղոնց, էջ 130): Աւելի ճիշտ կը լինի, եթէ այդ անունը կարդանք այսպէս՝ *أدر بن ممان*:
- ⁴⁷ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 273:
- ⁴⁸ Նոյն:
- ⁴⁹ Նոյն:
- ⁵⁰ Թ. Եակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Բ. Բարսեղեան, Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 3, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1991, էջ 376 եւ 381:
- ⁵¹ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 273:
- ⁵² Դրասխանակերտցի, էջ 146-149:
- ⁵³ Նոյն, էջ 188:
- ⁵⁴ Նոյն, էջ 186-189:
- ⁵⁵ Histoire De La Géorgie, էջ 271:
- ⁵⁶ Նոյն, էջ 270:
- ⁵⁷ Նոյն, էջ 273:
- ⁵⁸ Դրասխանակերտցի, էջ 186-187: Ի տարբերութիւն Մեծ Հայքից, Վիրքում թագաւորութեան վերականգնումից յետոյ «Երիտաւաւ էրիտաւաւ» տիտղոսը կրում էին իշխող արքայատոհմի գրեթէ բոլոր արու գաւազանները:
- ⁵⁹ Արծրունի, էջ 366-367:
- ⁶⁰ Դրասխանակերտցի, էջ 186:
- ⁶¹ Recueil Des Textes Relatifs A Sayf Al-Daulah, ed. par M. Canard, Paris, 1934, էջ 71: Յիշենք Ասողիկի քաղուածքը, որտեղ Աշոտը «...նախ քան զթագաւորութիւնն... իշխան եւ իշխանաց իշխան եղեալ Հայոց եւ Վրաց...»:
- ⁶² Պատմութիւն Շապուր Բագրատունուոյ, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ Եւսիկոպոս, էջմիածին, Տպ. Գիտական Ինստիտուտի, 1921, էջ 67:
- ⁶³ Նոյն, էջ 65:
- ⁶⁴ Դրասխանակերտցի, էջ 184:
- ⁶⁵ Նոյն:
- ⁶⁶ *سنة* - *الكلمة الجغرافية العربية* - Biblioteca Geographorum Arabicorum, ed. M. de Goeje, p. I, Lugduni Batavorum, 1870, էջ 188:
- ⁶⁷ Դրա մասին տե՛ս՝ Շահինեան, «Արմինիյա Արարական Նահանգի», էջ 319-320:
- ⁶⁸ *سنة*՝ Սուրէն Երեմեան, Հայաստանը Հատ «Աշխարհացոյց»ի (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ), (Եւսկուած Բ.), Երեւան, 1963, էջ 116-120:
- ⁶⁹ Դրասխանակերտցի, էջ 142:

THE BIRTH OF THE LAST ARMENIAN EMPIRE IN THE CONTEXT OF
ARAB SUZERAINITY

(Summary)

ARSEN SHAHINYAN

a_shahinyan@mail.ru

Arminiya constituted a part of the Arab Caliphate, which was decentralized in the mid-9th century. The state of *Arminiya*, which included Armenian, Georgian and Aghvan lands, started taking shape as a super-state with a total area of 236,748 Sq.km.

The author contests that this super-state was an Armenian Empire as it had brought forth imperial political space. As of 886 this Armenian Empire included the kingdom of the Bagratids of Mets Hayk, the princedoms of the Bagratids, Artsrunis, and Sunis as well as the Arab Emirates and city emirates of the Zurarigs, Kaysiks, and Usmaniks. It included as well the kingdoms and principalities of Kartli and Aghvank and the mountainous princedom of Kakheti Tsanars. The core of this Empire was the Bagratid kingdom in Armenia.

In fact, during the last years of *Arminiya*, the suzerainty of the Armenian Bagratid princes spread over all the Armenian, Georgian and Aghvan principalities and Arab emirates. The authority of the Armenian kings of this Empire was de jure recognized by the two superpower states of the time, the Arab Caliphate and the byzantine Empire. Its suzerainty was also recognized by the powerful rulers of the Abkhaz kingdom in Western Caucasia.

